

**ՔՐԻՍՏՈՖԵԼ ՎԱՆ ՋԻԽԵՄ ՓՈՐԱԳՐԻՉ-ՆԿԱՐՉԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Բանալի բառեր՝ փորագրապատկեր, տպագրություն, փորագրիչ, գրքի նկարագրողում, Քրիստոֆել վան Ջիխեմ, Թովմա Վանանդեցի:

Keywords: wood engraving, printing, engraver, book illustration, Christofel van Sichem, Tovma Vanandetsi.

Արևմտյան Եվրոպայի հայկական տպագրական կենտրոններից առանձնապես ուշագրավ է Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամինը դերը, որտեղ հայերեն գրքերի տպագրությունը սկսվելով 1660 թ., առժամանակյա դարարից հետո շարունակվում է մինչև 1716 թ., ամբողջ 57 տարի, և ապա վերջանում ընդմիջտ:

Ամստերդամի տպարանի պատմության մեջ իր հրատարակչական գործունեությամբ առանձնանում է Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմա Վանանդեցի Նուրիջանյանը [Սևակ, 1960, 412-415]: Շուրջ տասը տարվա (1695-1705 թթ.) ընթացքում Վանանդեցիները հրատարակում են 20 գիրք և «Համատարած աշխարհացոյց» կոչվող պղնձափորագիր քարտեզը: Իրենց տպագրական որակով Վանանդեցիների հրատարակությունները գերազանցում են մինչ այդ եղած բոլոր հայկական, անգամ՝ Ոսկանյան տպարանի հրատարակություններին: Վանանդեցիների հրատարակությունները աչքի են ընկնում շքեղ պատկերազարդմամբ, որի բաղկացուցիչ մաս են կազմում փորագիր պատկերները: Վերջիններիս հրատարակություններում հիմնականում տեղ են գտել ծագումով գերմանացի փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմի պատրաստած փորագրանկարները:

Եվրոպայում փորագրանկարչությունը շատ արագ մեծ ժողովրդականություն ստացավ: ԺԵ-ԺՁ. դարերի գերմանացի Հյուսիսային Վերածննդի մեծագույն նկարիչ Ալբրեխտ Դյուրերը (1471-1523 թթ.) կատարեց 374 փայտե փորագրանկար, որոնցից հայտնի են «Հայտնություն» (Ապոկալիպսիս) (15 թերթ), «Մարիամի կյանքը» (20 թերթ), «Մեծ չարչարանքներ» (12 թերթ), «Փոքր չարչարանքներ» (36 թերթ) շարքերը: 1496-1498 թթ. Դյուրերը ստեղծում է իր հայտնի՝ «Ապոկալիպսիս» (Հայտնություն) փայտափորագիր պատկերների շարքը: Այն բաղկացած է 15 փորագիր պատկերներից [Huntington, 1855, 306]: Հայտնությունը Նոր Կտակարանի կանոնի գրքերից վերջինն է: Ըստ Էրվին Պանառովսկու՝ Լեոնարդո դա Վինչիի «Վերջին ընթրիքին» համարժեք Դյուրերը ստեղծեց նման արժեքավոր ստեղծագործություն՝ «Ապոկալիպսիսը»: Դյուրերի այս աշխատանքը կրկնօրինակեցին ոչ միայն Գերմանիայում, Իտալիայում, այլ նաև Ֆրանսիայում, Ռուսաստանում և ոչ միայն

փորագրանկարների տեսքով, այլ նաև քանդակագործության, գեղանկարչության մեջ, որոնք իրենց ցայտուն արտացոլումը գտան նաև հայ գրքարվեստում:

Հայկական վաղ տպագիր գրքերում, այդ թվում նաև Վանանդեցիների հրատարակություններում, Դյուրերի որոշ աշխատանքներ հայտնվում են վերը նշված Քրիստոֆել վան Ջիխեմի կատարած փորագրանկարներով: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարները արված են նաև այլ հեղինակների գործերից (Abraham Bloemaert, Hendrick Goltzius, Lukas van Leyden, Maarten van Heemskerck): Նշենք, որ Ամստերդամյան հրատարակությունների փորագրանկարները կամ դրանց մեծ մասը ձեռք է բերել Մատթեոս Ծարեցին, քանի որ այդ պատկերները կան Ծարեցու հրատարակած Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1660-1661 թթ.) գրքում և «Շարակնոցում» (1664-1665 թթ.): Օտար հեղինակներից միայն Լեհման Հելմուտ Հաուպտը և Ջորջո Միլեսն են, որ նշում են վերը նշված փաստի մասին:

Թովմա Վանանդեցին իր հրատարակություններում հիմնականում օգտագործել է հենց այդ փորագիր պատկերները: Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերը ծնվել է 1581 թ. Բազելում, մահացել 1658 թ. Ամստերդամում: Ծագումով գերմանացի է: 1600-ական թվականներին նա ապրել է Ամստերդամում: Եղել է հոլանդացի հռչակավոր նկարիչ Հեն(դ)րիկ Գոլցիուսի (1558-1617 թթ.) աշակերտը [Wijnman, 233-244]: 1602-1606 թթ. աշխատել է Լեյդենում, իսկ 1606-1658 թթ. Ամստերդամում [Lehmann-Haupt, 252]: 1603 թ. Գոլցիուսի հետ միասին ճամփորդել է Լեյդեն, ծանոթացել տեղի փորագրիչ վարպետների աշխատանքներին: Հենդրիկ Գոլցիուսը 1596 թ. Վենետիկում սովորում է գրաֆիկա Տիցիանի դպրոցում: Նրա արվեստում ցայտուն կերպով արտահայտված է Տիցիանի արվեստի ազդեցությունը, հատկապես չորս ավետարանիչների պատկերներում (1593 թ. պահվում է Ռոտերդամի Boymans van Beuningen թանգարանում), որից էլ հետագայում ոգեշնչվել է Քրիստոֆել վան Ջիխեմը [Reznicek, 1961, 215]: Քրիստոֆել վան Ջիխեմը կամ «հոլանդացի Դյուրերը» հայտնի է եղել որպես գրքեր նկարագարող (ունի շուրջ 1200 փայտե փորագրություն): Ունի մի շարք ինքնուրույն գործեր, որոնցից լավագույնները գտնվում են դիմանկարների այն ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Ամստերդամում 1609 թ. (Iconica Haeresiarcharum): Նրա նկարագարումամբ է լույս տեսել «Քրիստոսի մանկությունը»՝ կատարված 1617 թ., ինչպես նաև Աստվածաշնչի մի քանի հրատարակություններ, որոնցից երկուսը հրատարակվել են Ամստերդամում (1646 թ., 1648 թ.) [Bryan, 1899, 398], Նոր Կտակարան՝ տպված Անտվերպենում (1646 թ.): Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերի այլ գործերի շարքում հայտնի են չորս ավետարանիչների դիմանկարները, որոնք օգտագործվել են Թովմա Վանանդեցու հրատարակություններում և Ոսկան Երևանցու Աստվածաշնչում (1666-1668 թթ.): 1657 թ. հրատարակված Biblia Sacra-ն ունեցել է 797 պատկեր՝ տպված Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրություններից: Վերջին երկու այս հրատարակություններում Ջիխեմը օգտագործել է Ալբրեխտ Դյուրերի, Լուկաս վան Լեյդենի, Հենդրիկ Գոլցիուսի, Հանս Հոլբայնի, Մարտին վան Հեմսկերկի կրկնօրինակումները: Վերջիններս իրենց նկարչական գործունեությունը սկսել են որպես գեղանկարիչներ և հայտնի են եղել որպես ակադեմիական նկարչության հմուտ վար-

պետներ: Քրիստոֆել վան Զիխենը համարվում է ԺԷ. դարի Էզրայի գրքի նկարագրողուների լավագույն վարպետը: Վերջին երկու հրատարակությունները հրատարակվել են Պիտեր Յակոբս Պատսի տպարանում:



Նկ. 1.1, 1.2 Արարչագործություն, ՄՄ Հմր 349 Աստվածաշունչ

Հարկ է նշել նաև, որ առաջին անգամ հայկական գրքերի համար Քրիստոֆել վան Զիխենի փորագրանկարները օգտագործվել են 1660-1661 թթ. Ամստերդամի «Սբ. Սարգիս և Սբ. Էջմիածին» տպարանի կողմից հրատարակած գրքերում, իսկ վերջին անգամ հանդիպում ենք 1739 թ. Կոստանդնուպոլսի Մարտիրոս Մարգսյանի տպարանի հրատարակություններում: Ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ Ոսկանյան տպարանի հրատարակությունների մեջ օգտագործված գրեթե բոլոր նկարները (փոքր բացառությամբ) Քրիստոֆել վան Զիխեն կրտսերի փորագրություններն են: Հետագայում այս բոլոր կրկնօրինակումները Զիխենը հրատարակել է մեկ ընդհանուր գրքում՝ *Der zielen Lust-Hof* խորագրով: Վան Զիխենի փորագրապատկերների մի մասը անմիջական կրկնօրինակներ են նաև Ջերոմ Նադալի (1507-1580 թթ.) Պատկերագարդ Ավետարանից [Ենոքյան, 2016, 79]: Ջերոմ Նադալի կազմած Պատկերագարդ Ավետարանը՝ կատարված Հիտուսական ուխտի հիմնադիր Լոյսլ Իգնատիոսի պատվերով, ԺՁ. դարի նշանավոր տպագիր գրքերից է: Այն տպագրվել է 1593-94 թթ. Անտվերպենում, Մարտին Նունթիոսի տպարանում [Moffitt, 1990, 631-638]: Ավետարանի ամբողջական վերնագիրն է *Evangelicae historiae imagines adnotationes et meditationes* [Bangert; Mccoog, 1992, 25-35]: Գրքում օգտագործված է 153 փորագիր պատկեր, հիմնականում կատարված հոլանդացի հայտնի փորագրիչներ Հերոնիմուս և Յոհաննես Վիրերիքս եղբայրների, իսկ մյուս մասն էլ իտալացի գեղանկարիչ

Բեռնարդինո Պերսեի կողմից [Buser, 1976, 424-425]: Փորագրապատկերները արտացոլում են Քրիստոսի կյանքը: Ջ. Նադալի Պատկերագրող Ավետարանը ոճական և հորինվածքային առումով հսկայական ազդեցություն ունեցավ հետագա տպագիր հոգևոր գրքի պատկերագրական համակարգի ձևավորման վրա, այդ թվում նաև Քրիստոֆել վան Ջիխեն կրտսերի: Տպագիր գրքերի փորագրապատկերների հիմքը դրվում էր ժամանակի եվրոպական գեղանկարչական և գծանկարչական բարձր վարպետությամբ ստեղծված հիմքերի վրա [Ենոքյան, 2016, 79]:



Նկ. 2.1. Հակոբի երազը Բերթելում, Աստվածաշունչ 1666-1668 թթ.



Նկ. 2.2. Հակոբի երազը Բերթելում, ՄՄ Հմր 204 Աստվածաշունչ

Ըստ Թիմ Բեքերի՝ ԺԶ-ԺԷ. դարերում եղել են չորս Քրիստոֆել վան Ջիխեն անունով նկարիչներ՝ Քրիստոֆել վան Ջիխեն երեց, Քրիստոֆել վան Ջիխեն, Կոռնելիոս վան Ջիխեն և Կառլ վան Ջիխեն: Նրանցից յուրաքանչյուրը իր գործունեությունը սկսել է քսաներկու տարեկանում: Տեսակետ կա, ըստ որի այս վերջին երկուսը միևնույն անձնավորությունն է, որը փորագրություններ է կատարել ոչ թե փայտի, այլ պղնձի վրա: Քրիստոֆել վան Ջիխեն երեցը ապրել ԺԶ. դարում Գերմանիայում և ոչ մի առնչություն չունի Ամստերդամի տպարանի փորագրանկարների հետ: Կա ենթադրություն, որ Քրիստոֆել վան Ջիխեն երեցը հայրն է ԺԷ. դարում ապրած մյուս վան Ջիխեն նկարիչների: Ուշագրավ է, որ մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Ջիխենը թողել է նրանց պատկերներից արած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հեն(դ)րիկ Գոլցիուս, և միաժամանակ դնելով իր ստորագրությունը՝ CVS [Պօդոսեան, 4-5]: Հարկ ենք համարում նշել նաև, որ Քրիստոֆել վան Ջիխենը, բացի վերը նշված վարպետներից, կրկնօրինակումներ է կատարել նաև ԺԶ-ԺԷ դարերի ֆլամանդացի հայտնի փորագրիչներ՝ Յոհան Չադելերի (Joan I Sadeler, 1572-1620), Կրիսպին վան դը Փաս երկրորդի (Crispian

de Passe, 1564-1637), Հանս Բոլ (Hans Bol, 1534-1593), Մարտին դը Ֆոսի (Marten de Vos, 1532-1603), Հյուգո Վան դը Գոսի (Hugo van der Goes 1430 (1440)-1482) ստեղծագործություններից: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարները զետեղվել են նաև Մարսելի, Լիվոռնոյի, Կոստանդնուպոլսի հայկական տպարանների հրատարակած գրքերում: Քրիստոֆել վան Ջիխեմի կատարած փորագրանկարներն արված են երկայնակի քսիլոգրաֆիայի տեխնիկայով [Քիրտեան, 1393, 18-20]: Նա փորագրության արվեստը ժառանգել էր իր հորից՝ Կարել վան Ջիխեմից՝ մասնագիտական գրականության մեջ Քրիստոֆել վան Ջիխեմ Ավագ անունով [Haupt, 1977, 39]: Քրիստոֆել վան Ջիխեմը, լինելով հմուտ փորագրիչ, կարողացել է վարպետորեն և մաքուր փորագրել իր ժամանակի նշանավոր նկարիչների աշխատանքները: Անտարակույս, սխալ է Հարություն Քյուրտյանի խիստ քննադատական խոսքը, այն մասին, թե Ջիխեմը աննշան փորագրիչ է և գուրկ է գեղարվեստական ըմբռնումից [Քիրտեան, 1966, 105-111]: Ջիխեմ կրտսերը, ի տարբերություն իր հոր, չորդեգրեց նրանից կոթողայնության արվեստը, սակայն իր պատկերների բարձր վարպետության և նրբագեղության շնորհիվ գերազանցեց անգամ իր հորը: «Ես եղել եմ ամենատաղանդավորը մեր ընտանիքի համանուն չորս նկարիչներից, որոնք ևս մեծ ներդրում են ունեցել ԺԷ. դարի հուլանդական փորագրության մեջ» - ասել է Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերը [Reznicek, 1961, 215-278]: Նա փայտը կտրում էր առանց խաչահատումների, և իր հատումների մեջ գերիշխում էին թեք գծերը, որն էլ հենց նրա առավելությունն էր: Ջիխեմի անվան հետ է կապված նաև 1617 թ. հրատարակած Kindsheyd onses Heeren Jesu Christ գիրքը՝ բաղկացած Քրիստոսի մանկությունը պատկերող տեսարաններից: Հարկ ենք հա մարում թվարկել այն հրատարակությունների անունները, որտեղ արտացոլվել են Քրիստոֆել վան Ջիխեմի ստեղծագործությունները.

- Boethius, Van de vertroosting der wysheid, 1616 թ., Ամստերդամ,
- Թովմա Գեմբացի, Յաղագս Համահետևման Քրիստոսի, 1624 թ. Անտվերպեն,
- Քրիստոսի մանկությունը, 1617 թ. Ամստերդամ, 1628 թ., Լուվեյն,
- Bibels Tressor ofte zielen Lust-Hof, 1629 թ., Լուվեյն,
- Historien ende prophetien der HI. Schrifturen, 1645 թ. Ամստերդամ,
- Augustinus, Vierige meditation ofte aandachten, 1645 թ. Անտվերպեն,
- Bibels Tressor ofte zielen Lust-Hof, 1648 թ., Ամստերդամ,
- Biblia Sacra, 1646 թ., Անտվերպեն և 1657 թ. Ամստերդամ:

Հետագայում 1646 թ. հրատարակած Սրբազան Ավետարանը կամ Biblia Sacra-ն վերահրատարակվում է 1739 թ. Ռոտերդամում և 1743 թ. Ամստերդամում Bibelshe prenten և Bibels Lust-Hof անվանումներով: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարների արդեն պատրաստի տպաձևերը Թովմա Վանանդեյցին օգտագործել է իր հրատարակություններում՝ հարմարեցնելով դրանք իր գրքերի բովանդակությանը: Մեզ հայտնի չէ, թե սկզբնապես ում կամ որ գրքերի համար են արվել Ջիխեմի փորագրանկարները: Բնչպես նշում է Հարություն Քյուրտյանը, հուլանդացի փորագրանկարիչը լատիներենով՝ A, B, C, D և այսպես շարունակ հաջորդաբար համարակալել է պատկերները և գրքի վերջում ըստ համարների հերթականության դրել նրանց մակագրությունները: Քանի որ գրքի վերջում հայերենը նման մակագրություններ չունի, ուստի տառերն անիմաստ են դառնում: Չենք

բացատրում նաև այն փաստը, որ Քրիստոֆել վան Չիխենը ծանոթ է եղել նաև ֆրանկ-ֆլամանդացի փորագրիչ, ոսկերիչ Թեոդոր դե Բրայի (1561-1623 թթ.) լատիներեն Աստվածաշնչի փորագրապատկերներին: Աստվածաշունչը հրատարակվել է 1609 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում: Այս ամենից ելնելով կարող ենք ասել, որ հայ տպագիր գրքերի նկարագրադրման արվեստը ձևավորվում էր ժամանակի գեղանկարչական բարձր վարպետությամբ ստեղծված հիմքերի վրա, իսկ Ոսկան Երևանցու և Թովմա Վանանդեցու հրատարակությունները դառնում են եվրոպական գեղանկարչական ազդեցությունները տարածող հիմնական աղբյուր: Այն գեղարվեստական մեծ ազդեցություն է ունենում ոչ միայն հայ տպագիր գրքի ձևավորման, այլ նաև ուշ շրջանի հայ միջնադարյան մանրանկարչության՝ հատկապես Աստվածաշնչերի պատկերագրադրման վրա: Ոսկանյան և Վանանդեցիների հրատարակությունները նոր որակ և կարևոր խթան հանդիսացան ԺԷ-ԺԸ դարերի հայ գրքարվեստի՝ գեղարվեստական նոր ձևերի մշակման, ձևավորման և զարգացման համար:



**Նկ. 3. Մհարոնի և իր որդիների օծումը,
Ողջակիզման արարողությունը, ՄՄ Հմր 349 Աստվածաշունչ**

Հետաքրքիր է դիտարկել, թե ինչպես են եվրոպական փորագրապատկերները իրենց արտահայտությունը գտել ուշ շրջանի հայկական ձեռագրաարվեստում: Եվրոպական փորագրանկարների ոճով հայկական Աստվածաշնչերի նկարագրադրումը սկսվում է ԺԷ.

դարի առաջին քառորդում: Մեզ են հասել մի շարք Աստվածաշնչեր, Ավետարաններ, Խորհրդատետրեր, որոնց պատկերագրությունների համար նախատիպեր են հանդիսացել եվրոպական պատկերները: Եվրոպական արվեստի այս շարժումը սկիզբ առավ Լեհաստանից և անցավ Կոստանդնուպոլիս, Սպահան: Այս շարժման կարևորագույն ներկայացուցիչն էր գրիչ-մանրանկարիչ Ղազար Բաբերդացին¹³: Շարժումը նույնիսկ տարածվեց հայ եկեղեցիների որմնանկարչության վրա, որի լավագույն օրինակը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի եկեղեցու որմնանկարներն են: Կարելի է ենթադրել, որ դեռևս 1658 թ. Ամստերդամում հաստատված Մաթեոս Ծարեցու, այնուհետև ջուղայեցի Ավետիս և Ոսկան Ղլիճեցիների կողմից փորագրապատկերների ընտրությունը ոչ թե պատահական, այլ նախընտրելի է եղել հայ գործիչների համար: Զմոռանանք նաև, որ Ամստերդամյան տպարանը հիմնվեց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվերով ու նախաձեռնությամբ և ֆինանսավորվում էր ջուղայեցի վաճառականների կողմից¹⁴: Այսպիսով ամստերդամյան հրատարակությունները անմիջականորեն կապվում են Նոր Ջուղայի հետ, որի եկեղեցիները 1650-ական թվականներին նկարագրողվում էին եվրոպական տպագիր գրքերի փորագրապատկերների կոմպոզիցիաները կրկնող որմնանկարներով: Հետաքրքրական է, որ այս կոմպոզիցիաների աղբյուրը Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրություններն են կամ այն տպագիր նախօրինակները, որոնցից վան Ջիխեմը օգտվել է, ինչպես օրինակ Ջ. Նաղալի պատկերագրող Ավետարանը¹⁵: Տեղեկություններ են պահպանվել, որ Նոր Ջուղայի հայ համայնքը կապեր է ունեցել վան Ջիխեմ ընտանիքի հետ: Եվրոպացի ճանապարհորդների և տեղացի կառավարիչների թողած տեղեկություններից հայտնի է, որ Մեֆյան Պարսկաստանի շահերը հետաքրքրված էին եվրոպական նկարչությամբ և հաճախ էին հրավիրում հատկապես հոլանդացի նկարիչներին՝ աշխատելու պարսկական պալատում: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Հովսեփ Արիմաթացին, ամբողջությամբ զարդարված է ԺԷ-ԺԸ դարերի որմնանկարներով, որոնք Հին և Նոր Կտակարանի տեսարաններ են պատկերում: Որմնանկարները ծածկում են եկեղեցու ողջ ներքին տարածությունը՝ հախճաասպլերից վերև: Իրենց ինքնատիպ ոճով զուգակցում են հայկական մանրանկարչության, արևմտաեվրոպական դասական հաստոցային գեղանկարչության և պարսկական դեկորատիվ արվեստի սկզբունքները՝ հիմնականում հիմք ունենալով իտալական և հոլանդական փորագրապատկերները: Սպահանի նշանավոր Մայրան Շահի խանութներում հայ վաճառականները

¹³ Ղազար վրդ. Բաբերդացին Լվովի Հաճկատար Աստվածածին վանքում Թորոս գրչին պատվիրել է գրել Աստվածառնչը, որը մասամբ նկարագրող է ինքը (ՄՄ 351, Լվով 1616-1619թթ., գրիչ՝ Թորոս դպիր, ծաղկող՝ Ղազար վրդ. Բաբերդացի):

¹⁴ Այս մասին Ոսկան Երևանցին հայտնում է Աստվածաշնչի վերջում թողած իր հիշատակարանում: Ըստ որի՝ 1665 թ. փետրվարի 20-ին Ոսկան Երևանցին Լիվոռնոյում ջուղայեցի վաճառականներ Ստեփաննոս Խանենցի, Թեոդորոս Քթռեցու և Պետրոս Ջուղայեցու հետ կնքում է պայմանագիր, որով հիշյալ վաճառականները հանձն են առնում կատարել Աստուածաշնչի տպագրութեան համար պահանջվող ծախսերը «յօգուտ ազգիս եւ ի շահ սրբոյ աթոռոյն»:

¹⁵ Նոր Ջուղայի հայկ. եկեղեցիների համար Ք. Վան Ջիխեմի փորագրապատկերները որպես սկզբնաղբյուր օգտագործելու մասին առաջին անգամ գրել է **T.S.R Bose** “A 17-th century typological cycle of painting in the Armenian Cathedral at Julfa”, journal at the Warburg and Courtauld institutes, 13. 1950, pp. 323-327.

վաճառում էին Վենետիկից ու Նյուրենբերգից բերված գեղանկարներ ու փորագրապատկերներ: Հայտնի է, որ Սպահանում էր պահպանվում Դյուրերի փորագիր պատկերների ճոխ հավաքածուն [Ղազարյան, 1968, 194] (այժմ՝ Փարիզի ազգային թանգարան): Եկեղեցու որմնանակարների մեծ մասը գրեթե նույնությամբ կրկնում են 1646 թ. Քրիստոֆել վան Ջիխեմի հրատարակած Bible Sacra-ի փորագրապատկերները, հատկապես Նոր կտակարանի որոշ տեսարաններ (Մոզերի Երկրպագություն, Կույրերի բժշկում, Մուսք Երուսաղեմ, Հեսեի Ծառ, (նկ. 8 ա, բ), Ահեղ Դատաստան և այլն) ուղղակիորեն փորագրանկարների վերարտադրություններն են [Eftekharian-Laporte, 2006, 358]: Տեղեկություններ են պահպանվել, որ Նոր Ջուղայի հայ համայնքը կապեր է ունեցել Քրիստոֆել վան Ջիխեմ ընտանիքի հետ: Հոլանդիայի վաճառականությունը ԺԷ. դարում կարևոր դեր էր կատարում ոչ միայն եվրոպական, այլ նաև արևելյան երկրների վաճառականության մեջ: Օրինակ 1638 թ. Այդ նույն ընկերության ղեկավար Ադամ Վեստերվոլտի բացի առևտրական փոխանակություններից, նրանք Պարսկաստան են ուղարկել Բարենդ վան Ջիխեմ անունով մի գծանկարիչի աշխատանքները: Ըստ հոլանդացի հետազոտող Մարտին Ժան Բոկի՝ Բարենդ վան Ջիխեմը եղել է Ք. Վան Ջիխեմ երկրորդի որդին [Bok, 2014, 177-205] և հավանաբար, նրա միջոցով են վերջինիս փորագրապատկերները հասել Նոր Ջուղա և օգտագործվել Ամենափրկիչ վանքի որմնանկարների պատկերազարդման համար:

Ամստերդամյան հրատարակություններից կարելի է առանձնացնել մոտ մեկ տասնյակ թեմատիկ փորագրապատկերներ, որոնք մեծ տարածում են գտել Կոստանդնուպոլսի, Սպահանի ոչ միայն տպագիր, այլ նաև ձեռագիր Աստվածաշնչերի նկարազարդման շրջանում [Lang, 1969, 622-623]:



Նկ. 4.1 և 4.2 Շարակնոց 1702 թ.,
1704 թ. Կեսարիա, Արծաթյա կրկնակազմ, 16-րդ դար

ԺԷ. դարում Նոր Ջուղայում և Կոստանդնուպոլսում նկարագարոված աստվածաշնչերը պատկերագարման տեսանկյունից բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը նկարագարովում էր Ալբրեխտ Դյուրերի և նրա հետևորդների, այդ թվում նաև Ամստերդամյան հրատարակությունների պատկերների, իսկ մյուսը՝ Թեոդոր դե Բրայի Աստվածաշնչի հիման վրա [Merian, 612-613]: Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռ. 201 (Սպահան, 1660 թ., գրիչ՝ Աստվածտուր, ծաղկող՝ Հայրապետ), ձեռ. 204 (Նոր Ջուղա, XVII դ., գրիչ՝ Գասպար Էրեց, Հարություն դպիր, Սարգիս Վանեցի, ծաղկող՝ Ստեփանոս), ձեռ. 349 (Կոստանդնուպոլիս, 1686 թ., ծաղկող՝ Մաղաքիա Կոստանդնուպոլցի, Մարկոս պատկերահան¹⁶) Աստվածաշնչերում, ինչպես նաև ձեռ. 389 խորհրդատետրում (Սպահան, 1647 թ., գրիչ՝ Աստվածատուր, ծաղկող՝ Հայրապետ Ջուղայեցի) զետեղված մի շարք մանրանկարներ իրենց պատկերագրությամբ ուղղակիորեն կրկնում են Ոսկանյան Աստվածաշնչի և Վանանդեցիների հրատարակությունների նույնանուն փորագրապատկերները՝ (նկարներ՝ 1ա, բ, գ, 2ա, բ, 4ա, բ,) հատկապես Հովհաննու Հայտնության նկարագարումները (նկ. 5, ա, բ, գ, դ), որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայտնության նկարագարումների համար նախատիպ են հանդիսացել միայն եվրոպական նախօրինակները, քանի որ հայ գրքարվեստում մինչ ԺԷ. դարը գրեթե չենք հանդիպում Հայտնության պատկերներ [Միմոնյան, 2016, 63]:

Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրապատկերները իրենց արտացոլումն են գտել ամստերդամյան հրատարակությունների դրոշմագարդ կաշվե կազմերի, ինչպես նաև ԺԷ-ԺԸ դարերի հայ արծաթագործության, եկեղեցական հարդարանքի, որմնանկարչության մեջ: Օրինակ՝ Կեսարիայի հայ արծաթագործները իրենց պատրաստած կրկնակազմերի ձևավորման համար օգտվել են Ջիխեմի փորագրապատկերներից (նկ. 6ա, բ) [Merian, 2013, 117-187]: Ուշ շրջանի հայկական ձեռագրերի և տպագիր գրքերի դրոշմագարդ կաշվե կազմերի վրա սովորաբար պատկերում էին Խաչելություն և Հայտնության Տիրամայր տեսարանները: Քրիստոֆել վան Ջիխեմի արվեստում գերակշռում են Հայտնության Տիրամոր պատկերները, որոնք իրեն արտացոլումն են գտել Վանանդեցիների հրատարակություններում: Ջիխեմը այդ կրկնօրինակները ստեղծել է Դյուրերի և Հերոնիմուս Վիրերիքսի պատկերներից: Լավագույն օրինակն է Ոսկան Երևանցու 1666 թ. Աստվածաշնչի կազմը:

¹⁶ Աստվածաշունչ, ՄՄ 349: 1686թ., Կոստանդնուպոլիս: Ծաղկող Մաղաքի Կոստանդնուպոլսեցի, Մարկոս պատկերահան (Մայր Ցուցակ Հայերեն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հատոր Բ, Երևան 2004, էջ 171):



**Նկ. 5.1 և 5.2 Համբարձում, Շարակնոց 1702թ.
Ջերոմ Նադալ, Պատկերագարդ Ավետարան**

Ամստերդամյան հրատարակություններում տեղ գտած փորագրանկարների տպատախտակները արված են շատ մեծ վարպետությամբ, և այդ է պատճառը, որ դրանք հետագայում հանդիպում ենք ԺԷ-ԺԸ դարերի հայ հնաստիպ գրքերի նկարագրողումներում (օրինակ՝ Մխիթար Սեբաստացու, Գրիգոր Մարզվանեցու, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, Գրիգոր Խալդարեանց): Այսպիսով կարող ենք ասել, որ Քրիստոֆել վան Ջիխեմի արվեստը Ամստերդամի տպարանի հրատարակությունների շնորհիվ իր արտացոլումն է գտել հայ արվեստում:

SUMMARY

In the 16th centuries in the Armenian cultural life, an extremely important event took place, the start of Armenian printing. After the Gutenberg invention, a rapidly developing printing business in Europe drew the Armenian cultural figures' attention. Until 18th century the Armenian printed books were used by the works of European engraving masters, especially the German motifs by Christoffel van Sichem. He was born in 1581 in Basel, died in 1658. in Amsterdam. He was the elder son of Christoffel van Sichem, Carl van Sichem's brother, and the student of the prominent Dutch artist Henri Goltsius (1558-1617). In the 1600's, he lived and worked in Amsterdam. Christoffel van Sichem or "Dutchman Durer" was known as a book illustrator (with about 1200 wooden engravings). He has a number of independent works, the best of which are in the collection of portraits published in Amsterdam in 1609. (Iconica Haeresiarcharum): His illustrations were published in "The Childhood of Christ" printed in 1617, as well as several Bible publications, two of which were published in Amsterdam (1646), New Testament, published in Antwerp (1646), and more. Published

in 1657 Biblia Sacra had 797 images printed by Christoffel van Sichem, most of which were used in the publications of Voskanian and Vanandets. These caricatures are duplicated from famous paintings by Albrecht Durer, Martin van Heemskerck, Abraham Bloemaert and other European masters. Part of Christoffel van Sichem's engraving paintings are also direct copies of the works by Jerome Nadal (1507-1580) from the Illuminated Gospel, the master of the Wierix Famous Dynasty. Christoffel van Sichem's carved the initials of these painters (AD- Albrecht Durer, HG- Henri Goltsius) on his paintings and at the same time putting his signature on CVS. We also note that Christoffel van Sichem, besides the above-mentioned masters, also made copies of famous Flemish Engravers of the Fifteenth Century such as Johann Sadeley, Crispin van den Broek, Hans Mamling, Marten de Vos, Hugo Van der Goes, Christoffel van Sichem's engraving images have been reflected not only in the Armenian printed book, but also in the 17th century Armenian art of manuscripts, especially in Bibles, as well as frescoes (St. Holy Savior Cathedral of New Julfa), silverware and church outfit.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ենոքյան Ա., Ոսկան Երևանցու տպագիր գրքերի պատկերագրությունը և դրա ազդեցությունը հայ գրքարվեստում // «Ոսկան Երևանցի. Ճամփորդության հայ տպագրության քառուղիներով» գիտաժողովի նյութեր, Երևան, Մատենադարան, 2016, էջ 77-84:
2. Ղազարյան Մ., Նոր Ջուղայի ԺԷ դարի հայ նկարչությունը // Պատմա-բանասիրական հանդես, Հ^տ 1, Երևան, 1968, էջ 193-202:
3. Պողոսեան Յովհ., Հոլանտայի հայկական տպարանները // Արեգակ, Լոնդոն, 1966, Հ^տ 28, էջ 4-5:
4. Սիմոնյան Ա., Ոսկանյան Աստվածաշնչի և ԺԷ. դարի հայերեն ձեռագիր աստվածաշնչերի պատկերագրական աղբյուրները, Էջմիածին, Էջմիածին, 2016, Ժ., էջ 61-75:
5. Սևակ Մ.Կ., Թովմա Վանանդեցիի տպարանը Ամստերդամի մէջ // Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1960, Հ^տ 7, էջ 412-415:
6. Քիրտեան Յ., Փայտափորագրչական մանրանկարչութիւնը եւ մանրանկարիչներ հայ տպագրութեան մէջ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1939, 20 էջ:
7. Քիրտեան Յ., Ոսկանի Աստուածաշնչի փայտափորագիր պատկերները, // Սիոն, Կրօնական, գրական, բանասիրական պաշտօնաթերթ, Երուսաղէմ, Երուսաղէմի հայ պատրիարքութեան, 1966, փետրուար-մարտ, էջ 105-111:
8. Bangert W., McCoog T., Jerome Nadal, 1507-1580, Tracking the first generation of Jesuits, Chicago, Loyola Press, 1992, 401 p.
9. Bok M., “European Artists in the Service of the Dutch East India Company” // Mediating Netherlandish Art and Material Culture in Asia, Amsterdam, Amsterdam University Press, 2014 pp. 177-205.
10. Boase T., A 17-th century typological cycle of painting in the Armenian Cathedral at Julfa // Jurnal at the Warburg and Courtauld institutes, The Warburg Institute, 1950, Vol. 13, № 3/4, pp. 323-327.
11. Bryan M., A biographical and critical dictionary of painters and engravers, II Voll., London, Bungay, 1899, 398 p.

12. Buser T., Jerome Nadal and Early Jesuit Art in Rome, *The Art Bulletin*, New York, College art Association press, 1976, September, Vol. 58, № 3, pp. 424-433.
13. Eftekharian-Laporte S., Le rayonnement international des gravures flamandes aux XVI et XVII siecles: Les peintures murals des eglises Sainte-Betleem et Saint-Sauveur a la Nouvelle-Djoulfra (Ispahan) // Belgium, *Art et histoire de l'art*. Universite' Libre de Bruxelles (U. L. B.) press, 2006, 358 p.
14. Haupt H., *An Introduction to the woodcut of the seventeenth century*, New York, Abaris book, 1977, 282 p.
15. Huntington D., *Sketches of the Great Masters. Albert Durer* // *The Crayon*, 1855, Vol. 1, No. 20 (May 16.), pp. 300-306.
16. Lang D., *New Julfa: The Armenian Churches and Other Buildings by John Carswell* // *Bulletin of the School of Oriental and African Studies*, London, University of London press., Vol. 32, No. 3 (1969), pp. 622-623.
17. Merian S., *Illuminating the Apocalypse in seventeenth-century Armenian manuscripts: The trnsition from printed book to manuscript: The Armenian Apocalyptic Tradition A Comporative Perspective* // *Essays presented in honor of professor Robert W. Thomson on the occasion of his eightieth birthday*. Edited by Kevork B. Bardakjian and Sergio la Porta, Brill, Leiden/Boston. pp. 612-613.
18. Merian S., *Armenian Silversmiths of Kesaria in the sixteenth and seventeenth centuries* // *Armenian Kesaria and Cappadocia*, California, Costa Mesa, 2013, pp. 117-187.
19. Moffitt J., *Francisco Pacheco and Jerome Nadal: New Light on the Flemish Sources of the Spanish Picture-within-the-Picture* // *The Art Bulletin*, Vol. 72, No. 4 (Dec. 1990), pp. 631-638.
20. Reznicek E., *Drawings by Hendrick Goltzius, Thirty Years Later: Supplement to the 1961 "catalogueraiisonné"* // *Master Drawings*, Vol. 31, No. 3 (Autumn, 1993), Amsterdam, pp. 215-278.
21. Wijnman H., *De van Sichem-puzzle* // *Een hijdrage tot de gesehiedents van de Nederlandsche grafische kunst*, *Oud Holland* 46 (1929), pp. 233-244.